ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ԳԷՈՐԳԻ

ՑԵՐԵՒԱՆ ԵԿԻ Ի ՏՓԽԻՍ։

Արդէն յայտնի է մեր Ազգայնոց՝ զոր անցեալ Ապրիլ ամսագրոյս մէջ հրատարակած ենք, Նորին Վ. Եհափառութիւն՝ իւր անձնական քաջառողջութիւնը օգտափոխութեամբ առաւել գտնելու պարտաւորուած՝ ինչպէս և բժիշկք խորհուրդ տուեալ էին, ուստի 'ի 25-ն անցեալ Ապրիլ ամսոյ յաւուր շաբաթու՝ պատրաստեցաւ ելանել 'ի Ճանապարհ։

Նախ և յառաջ՝ Նորին Վ. Եհափառութիւն՝ զհամայն Միաբանութիւն Մայր Աթոռոյս ընկալաւ իւր ներկայութեան, և յատկապէս խօսեցաւ մի քանի խրատներ և պատուէրներ, զառաջինն՝ պարզելով զեւր թէ՝ 'ի մօտոյ և թէ՝ 'ի հեռուստ առ Ս. Միաբանական Ուխտս մեր ինչպէս և առ համայն օրհնեալ և սիրելի Ազգս ունեցած և կրած յարատև և հաւասար սէրը և խնամքները՝ ամենայն ժամ և ամեն պարագայից մէջ, երկրորդ՝ առարկեց քանի ամսէ 'ի վեր ենթակայ եղած անձնական տկարութեան քաջառողջութիւնը ըստ արժանւոյն կազդուրելու համար՝ օգտափոխութեան երթալու ստիպուիլը, և ապա մէջեց իւրաքանչիւր անդամոց Ուխտիս ըստ իւրաքանչիւր կոչման՝ պատուոյ և ատենաբանի՝ ինչպէս արժանն է, թէ առանձին և թէ Միաբանութեամբ՝ առ Ս. Աթոռս ունեցեալք պարտաւորութիւնքը և հսկողութիւնքը, և պատուիրեց այլ և այլ ժողովականաց և պաշտօնակալաց՝ ամենայն անձնանուիրութեամբ ժիր և արթուն կալ իւրեանց զանազան պաշտօնից մէջ, հուսկ յետոյ՝ իւր հրաժարական ողջոյնը և օրհնութիւնը մատոյց ՀԱՅԿ ԲԱՐԵԱՐԱՐԵԼՈՅՆ և ՏԷՐ ԸՆԴ ՁԵՂ ասելով։ Իսկ Միաբանութիւնս ևս փութացաց խորին յարգանօք և ակնածութեամբ մատչել 'ի համբոյր Ս. Աջոյ Նորին Վ. Եհ. Օծութեան։ Եղ ապա նոյն ուխտիս Ս. Կաթողիկոսն 'ի Վ. Եհարանէ, և էջ ուղղակի նախ՝ 'ի Ս. Տաճարն, ուր մատուցեալ զառանձնական աղօթսն և զենդրուածս հանդերձ երկրպագութեամբ, ետ անտի հրաժեշտ և գնաց բաղմիլ 'ի կառս, որ արդէն պատրաստ կ'սպասէր 'ի ներքոյ հրապարակին հիւսիսային արևելեան դռան Վ. անուցս։

Ռաւական ժողովրդոց և ձիաւորաց և պաշտօնականաց՝ ևս երկուց Գ. Եր. Երք եպիսկոպոսաց և ոմանց վարդապետաց ուղեկցութեամբ յաստիճան 8 ¾ ժամին մեկնեցաւ Վ. Եհ. Կաթողիկոսն 'ի Ս. Էջմիածնէ. և զառաջեաւ Նորին Ս. Օծութեան՝ երկու Երժ. Վարդապետք՝ աշտանակեալք 'ի ձիս՝ Կաթողիկոսական գլուխ և գոտ-աղան բարձեալ 'ի ձեռին կը կրէին։

Երևանայ Փոխ - Թեմական Երժ. Մեսրոպ վարդապետ Սմբատեանց փութացեալ էր դիմաւորել զՎ. Եհ. Կաթողիկոսն 'ի Փարաքար գեղջ։

Մի և կէս ժամու չափ միջոց մնացած ցԵրևան, Քաղաքական Իշխանութեան կողմանէ մի պատուաւոր պաշտօնական հանդերձ մերաղնեայ և այլազգի պաշտօնակալօք և ձիաւորօք ընդառաջել փութացած էր Նորին Վ. Եհափառութեան

դէմ, և ուղեկցեցաւ մինչև 'ի Ս. Սարգսի Վանան Երևանայ, ուր սովոր էր ինքանել։

Մինչ մերձենայր Երևան քաղաքին, խուռն բազմութիւն մերաղնեայ ժողովրդեան մեծաւ սիրով և փափագանօք ու համակրութեամբք կը դիմէին ընդ առաջ Վ. Եհ. Կաթողիկոսին, և մինչև 'ի դուռն Ս. Սարգիս եկեղեցւոյ վանուցն՝ հետզհետէ կ'բազմապատկէին ամբոխ ժողովրդեան՝ արանց և կանանց, և արդէն Եկեղեցւոյ մէջ ևս խռնած լցնալ էին։

Մերձ Եկեղեցւոյն՝ դասք Եկեղեցականաց՝ Քահանայք և դպիրք շուրջառներով և շապկօք և այլ եկեղեցական զարդուք արժանաւոր հանդէս կազմած՝ երգօք շարականաց դիմաւորեցին զՎ. Եհ. և Սրբազնագոյն Կաթողիկոս. Որ նովին շքեղ հանդիսիւ մտաւ 'ի սուրբ Սարգիս եկեղեցին. և զկնի սովորական աղօթից և մաղթանաց, ոմն յաշակերտաց Թեմական-Դպրոցի Երևանայ՝ Ադամ Գէորգեան 'ի բեմն Ս. եկեղեցւոյ ընթերցաւ մի համառօտ ճառ. և ապա օրհնեց Տէրն Վ. Եհ. և զԺողովուրդն և զՀամայն Ազգ իւր սիրեցեալ, և եկ և գնաց 'ի Հայրապետական սենեակն վանուց. ուր և անմիջապէս հաճեցաւ ընդունել Վ. սեմ. Ռուչինի՝ Փոխ-Տեսչապետին Երևանայ այցելութիւնը։

'Ի յաջորդ աւուրն 'ի Կիւրակէի՝ առաւօտեան Ս. Պատարագի ժամանակ՝ գնաց 'ի Ս. Եկեղեցի։ Եւ զկնի արձակման Եկեղեցւոյն բարեհաճեցաւ ընդունիլ սիրով՝ Երևանայ մերաղնեայ երևելեաց և յառաջաւորաց այցելութիւնքը, որք խորին ակնածութեամբք և ջերմեռանդն զգացմամբք ներկայացան Տէրն Ս. Օծութեան։

Կէսաւուր մերձ 'ի ժամ 4 ½ հաճեցաւ երթալ հանդերձ Եպիսկոպոսօք ևն. յայցելութիւն Տիկնոջ Տեսչապետի, Պ. Ռուչինի, ևս Պ. Հրաման Մելիք-Աղամալեանց և Երսէն Սուլթան Պէգամեան մերաղնեայ վսեմափայլ երևելեաց։

Երևանայ մէջ մի քանի գործեր կարգադրելով և պատուէրներ տալով, 'ի 27-ն ապրիլի առաւուանց այն է՝ ժամ տասն և մէկին միջոցները՝ ուղեկցութեամբ խուռն բազմութեան ժողովրդեան և այլոց՝ մեկնեցաւ յԵրևանայ, և նոյն երկուշաբթի երեկոյ՝ 'ի Նեռքին—Ախտայ, երեքշաբթի երեկոյ՝ 'ի Ղուրուստան, չորեքշաբթի երեկոյ՝ յԱղսթաֆայ գիշերելով, հինգշաբթի ցերեկէն յետոյ 'ի ժամ 7-ն հասաւ 'ի սուրբ հանդակական իջևանն Դաղլուչի, ուր փութացեալ կ'սպասէին Գեր. Մակար Ս. Աբք Եպիսկոպոս՝ Թեմական-Առաջնորդն Տփխիսայ և երկու Մեծ. անձինք՝ 'ի Հոգաբարձուացն Կերսիսեան Հոգևոր—Ազգային Ուսումնարանի՝ Պայծառափայլ իշխան Միքայէլ Երսէնեան Ռէհրուտեանց և Մեծապատիւ Պ. Գրիգոր Յովհաննէսեան Իզմիրեանց՝ իբրև պատգամաւոր 'ի դիմաց Հոգաբարձութեան նոյն Ուսումնարանի և քահանայք ոմանք և այլն, և արժանաւոր մեծարանօք դիմաւորեցին և ընդունեցին զՎ. Եհ. Կաթողիկոսն 'ի նոյն իջևանն. յորում և հանդստացաւ Տէրն Վ. Եհ. և Գեր. Մակար Ս. Աբք Եպիսկոպոսն վերադարձաւ 'ի Տփխիս՝ ընդունելով զՀրաման Վ. Եհ. Կաթողիկոսի։

'Ի յաջորդ աւուրն 'ի 1-ն մայիսի՝ առաւօտեան ժամ երկուքին միջոցները մեկնեցաւ և անտի՝ և կը փութայր մտանել 'ի

Տփխիս։ Թէ և ճանապարհն չէր այնքան երկար, որ Նաղլուչայէն մինչ 'ի Տփխիս չորս ժամ տևէր, բայց քաղաքին դրսէն սկսեալ այնքան խուռն բազմութիւն մերոց Աղգայնոց փութացեալ էին ընդ առաջ Ս. Հոգ. Հայրապետիս մերոյ, որոց ոմանք 'ի կառս նստեալ, ոմանք 'ի ձիս աշտանակեալք (որք մինչև հինգ և վեց վերստ ընդառաջած էին), բազումք հետիոտս, և իւրաքանչիւր արհեստաւորաց խումբք իւրեանց դրօշակները ծածանելով կ'ուղեկցէին իւրեանց ցանկալի և պատուական Գլխոյ՝ Արքաղնապոյն Հայրապետի մերում։

'Ի վերին ծայր այգեստանեայց քաղաքին՝ Գեր. Մակար Ս. Երք եպիսկոպոսն հանդերձ Եւագ քահանայիւք և այլովք՝ կրկին դիմաւորեց զՍ. Հոգ. Կաթողիկոսն, ուր 'Նորին Ս. Օծութիւնը եղեալով իւր ճանապարհորդութեան կառքէն, յատկապէս պատրաստուած քառաձի լծուած կառքին նստաւ։ Եւ մտեալ 'ի քաղաքն և հասեալ 'ի հրապարակ՝ որ ընդառաջ Ս. Հոգ. փառաւոր և վայելուչ իմն մեծ հանդիսով եկեղեցականք դիմաւորեցին զնորին Ս. Հոգ. Հաստատութիւն։ Ուր և Ս. Կաթողիկոսն իջեալ 'ի կառաց՝ շուրջառ առաւ և Խաչ և Գաւազան 'ի ձեռն՝ ընդ ամպհովանեաւ սկսաւ նոյն հանդիսիւ և երգօք շարականաց՝ դիպակի վերայով ընդառաջել 'ի Ս. Եկեղեցին Ս. Հոգ.։

Բազմութիւնը այնքան խուռն 'ի խուռն դիզուած կուտակուած էր, որ անհնարին եղև ամպհովանին վանուց արտաքին պարսպի դռնէն 'ի ներքս առնուլ. պէտք էր ամապարել 'ի Ս. Եկեղեցին, ուր ևս արդէն արք և կանայք՝ անդր քան զչափն լցեալ էին։ Ուր մտեալ Ս. Հայրապետին՝ յետ սովորական աղօթից, Գեր. Թեմական-Առաջնորդն ըստ պատշաճին մի համառօտ բան խօսեցաւ. որում պատասխանելով 'Նորին Ս. Օծութիւն՝ օրհնեց զժողովուրդն և զհամայն սիրելի Հայկազնեան որդիս իւր, և ապա (ոչ սակաւ դժուարութեամբ) կրկին ել 'ի Ս. Եկեղեցւոյ հանդիսիւ և շարականաց երգակցութեամբ, և 'ի վերայ սանդղոց դարձեալ օրհնելով զժողովուրդն՝ մտաւ 'ի ներքս 'ի Զ. Հարան Զ. անուց։

Յետ սակաւուց փութաց զալ Զ. սեմ. 'Նահանգապետն Տփխիսայ Պ. Օռլովքի՝ առ 'ի շնորհաւորել զգալուստս Զ. Հոգ. Կաթողիկոսի՝ 'ի դիմաց Բարձրա. Փոխարքային։ 'Նոյնպէս Պաղաքապետն Զ. սեմ. Եւաղն Թումանեանց և այլք 'ի մերազնէից և յօտարաց փութացին զալ յայցելութիւն և շնորհաւորել զգալուստ 'Նորին Ս. Օծութեանն։

'Ի յաջորդ աւուրն 'ի 1-ն Մայիսի՝ Գեր. Մակար Ս. Երք Եպիսկոպոս՝ Թեմական—Առաջնորդն Տփխիսայ՝ ընդ համայն հոգևորական դասս Տփխիսայ՝ հանդիսաւոր կերպիւ ներկայացաւ Զ. Հոգ. Կաթողիկոսին առ 'ի մատուցանել զնորին յարգանս և զմեծարանս իւրեանց շնորհաւորելով միանգամայն 'ի դիմաց ժողովրդեան զգալուստ 'Նորին Ս. Օծութեան։

'Նոյնպէս և երևելի և յառաջաւոր անձինք և այլք 'ի մերազնէից՝ փութացին և մատուցին մեծաւ սիրով զհամակրութիւնս և զյարգանս իւրեանց առ 'Նորին Սրբութիւն։

Բարձրաց. Մեծ Իշխան Միքայել 'Նիկողայոսեան՝ Փոխարքային Կովկասեան զաւառաց, որ յշ-ն մայիսի գնացեալ էր բարեսին՝ յետ սովորական աղօթից, Գեր. Թեմական-Առաջնորդն ըստ պատշաճին մի համառօտ բան խօսեցաւ. որում պատասխանելով 'Նորին Ս. Օծութիւն՝ օրհնեց զժողովուրդն և զհամայն սիրելի Հայկազնեան որդիս իւր, և ապա (ոչ սակաւ դժուարութեամբ) կրկին ել 'ի Ս. Եկեղեցւոյ հանդիսիւ և շարականաց երգակցութեամբ, և 'ի վերայ սանդղոց դարձեալ օրհնելով զժողովուրդն՝ մտաւ 'ի ներքս 'ի Զ. Հարան Զ. անուց։

Յետ սակաւուց փութաց զալ Զ. սեմ. 'Նահանգապետն Տփխիսայ Պ. Օռլովքի՝ առ 'ի շնորհաւորել զգալուստս Զ. Հոգ. Կաթողիկոսի՝ 'ի դիմաց Բարձրա. Փոխարքային։ 'Նոյնպէս Պաղաքապետն Զ. սեմ. Եւաղն Թումանեանց և այլք 'ի մերազնէից և յօտարաց փութացին զալ յայցելութիւն և շնորհաւորել զգալուստ 'Նորին Ս. Օծութեանն։

'Ի յաջորդ աւուրն 'ի 1-ն Մայիսի՝ Գեր. Մակար Ս. Երք Եպիսկոպոս՝ Թեմական—Առաջնորդն Տփխիսայ՝ ընդ համայն հոգևորական դասս Տփխիսայ՝ հանդիսաւոր կերպիւ ներկայացաւ Զ. Հոգ. Կաթողիկոսին առ 'ի մատուցանել զնորին յարգանս և զմեծարանս իւրեանց շնորհաւորելով միանգամայն 'ի դիմաց ժողովրդեան զգալուստ 'Նորին Ս. Օծութեան։

'Նոյնպէս և երևելի և յառաջաւոր անձինք և այլք 'ի մերազնէից՝ փութացին և մատուցին մեծաւ սիրով զհամակրութիւնս և զյարգանս իւրեանց առ 'Նորին Սրբութիւն։

Բարձրաց. Մեծ Իշխան Միքայել 'Նիկողայոսեան՝ Փոխարքային Կովկասեան զաւառաց, որ յշ-ն մայիսի գնացեալ էր

մի այլ տեղ՝ կարևոր գործով, ուխտին վերադառնալով, 'ի 10-ն մայիսի յաւուր կիրակի յատուկ հրաւիրակաւ 'ի դիմաց Տորին Խարձրութեան՝ և պաշտօնական հագուստներ հագած անձամբք և կառքով Տորին՝ գնաց Վ. Եկ. Կաթողիկոսն յայցելութիւն Խարձր. Փոխարքային, և արժանաւոր պատուով և սիրով ընդունուեցաւ և մեծարեցաւ. և կէս ժամու չափ տեսնուելով՝ նոյն կառքով վերադարձաւ 'ի Վ. Եհարանն։

Ի յաջորդ աւուրն Տորին Խարձրութիւն մեծ Իշխանն և Փոխարքայն ևս հաճեցաւ փոխադարձ այցելութեամբ պատուել զ'Տորին Ս. Օծութիւն, և արժանին մեծարանօք ընդունուեցաւ 'ի Տորին Վ. Եհափառութենէ. և կէս ժամն աւելի տեսակցեալ՝ վերադարձաւ։

Ի վիրայ բեմի Ս. Սարգիս եկեղեցւոյ Վանուց Երեւանայ ընթերցեալ ճառն.

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Արդարև Հայաստանի պժմեան Մայրաքաղաքն Երևան, այս քանի անգամ է, որ շնորհաբեր այցելութեամբ մեծի Քահանայապետիդ Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ՝ ուրախանայ և բերկրիսյն, և այժմ իսկ բերկրապատար խնդութեամբ լցուած, աւասիկ Եկեղեցացդոյ իւր որդիքը Հոգևոր Գլխոյդ մօտ, ըստ Աւետարանին տեսանել զիւր ցանկալի քաջ և արթուն Հովուապետդ և լսել քաղցրալուր և փրկարար Հայրական խրատներդ. ուստի և Երրայեցւոց երջանիկ ծերոց և մանկանցնման հեզեխառն ուրախութեամբ "Ովսաննայ" կարդալով Ձեզ՝ շնորհաւորեմք Ձեր շնորհածաւալ այցելութենդ մեր փոքրիկ Հօտին, և ամենայն ջերմեռանդութեամբ հոգւոյ մաղթեմք յԱստուծոյ, որ Հրեշտակի խաղաղութեան յանձնելով՝ Հայոց Ազգին երջանկութիւն պատճառող թանկագին Ձեր անձը, ուրախ գնացք տայ Ձեզ և յաջող վերադարձ։ Առ որ և Մօրս մեր Ս. Եկեղեցւոյ հետ ձայնակից լինելով երգեմք. "Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ"։

Ասաց աշակերտ Ս. Գրոգորեան թանգարանի
Գրագրին Սիմեոնոյ. Ազգամ Գեղրիեան։
Ի 23 Ապրիլ. 1870-ի
Երևան

Գ-ՐԴ ՏԱՐԵԳԱՐՁ

Ս. ՕԾՄԱՆ Ջ. Տ. ԳԷՈՐԳԵԱՆ Դ. ՎԵՀ. ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ա.ՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ։

Ամսոյս 21-րդ օրը՝ յորում էր Գ-ՐԴ Տարեդարձ Ս. Օծման Վ. Եկ. Կաթողիկոսի ամենայն Հայոց, Մայր Աթոռոյ մերոյ համայն Ս. Ուխտիս համար մխիթարական և բերկրապատար հրճուանօք լի ծագած էր։

Նոյն օրը՝ ամենայն զգայուն սրտեր և եռանդուն անձինք՝ Ս. Առաքելոցն Թարթուղիմեայ և Թադէի, և Ս. Գրիգորի մեծի Լուսաւորչի արժանաւոր Յաջորդի՝ Հայաստանեայց Ազգի և Եկեղեցւոյ անձնանուէր և քաջ Հովուապետի և Գլխոյ՝ Տ. Տ. Գէորգեայ Գ-ի՝ 'ի Գահակալութիւն Մայր Աթոռոյս և 'ի Հայրապետութիւն ամենայն Հայոց Օծման Գ-ՐԴ Տարեդարձին առթիւ՝ բարենպատակ և խորին համակրութեամբք յափշտակուած՝ և հասարակաց այնպիսի բարեխնամ Հոր սիրագործութեամբք և բարի բարի անձկութեանց իրական ապացոյցներով ոգե-